

1



2



3

ԱՂ. Ա

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԱՐՏԷԶԸ

Արտակ Վարդանեան

1921 թուականի մարտի 16-ի Կարսի տխրահռչակ դաշնագրով Խորհրդային Ադրբեջանին բռնակցուելուց յետոյ բնիկ հայկական Նախիջեւանի տարածքում Ադրբեջանի վարած յայտնի հակահայ քաղաքականութեամբ պետական մակարդակով ոչ միայն կազմակերպուեց բնիկ հայ բնակչութեան ճերմակ ցեղասպանութիւնը, մշակոյթի համաշխարհային գանձարանի մասը կազմող բազմաթիւ հայկական յուշարձանների ոչնչացումը, այլեւ իրենց իսկ բնօրրանում մարեցին ամբողջ շարք տոհմիկ հայ բարբառներ:

Նախիջեւանի տարածքն ընդգրկում է պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն եւ Նախճաւան, Այրարատ աշխարհի Շարուր, Սիւնիք աշխարհի Ճահուկ-Շահապունիք եւ Երնջակ գաւառները: Պատմական տարբեր նահանգների, հետեւաբար եւ ազգագրական տարբեր շրջանների խաչմերուկ լինելու հանգամանքը, ինչպէս նաեւ բնակչութեան զանգուածային տեղաշարժերը նպաստել են Նախիջեւանի տարածքի բարբառային բազմազանութեանը:

20-րդ դարի սկզբին Նախիջեւանի տարածքն ընդգրկում էր մօտ եօթ տասնեակ հայաբնակ բնակավայր, որոնց գերակշռող մասը (38 բնակավայր) խօսում էր Խոյի բարբառի խօսուածքներով (1828 թուականի Թուրքմենչայի պայմանագրով Խոյ-Սալմաստից ներգաղթածները), քանի որ 1604-1605 թուականների շահաբասեան յայտնի բռնագաղթից յետոյ Նախիջեւանի բնիկ հայ բնակավայրերի մեծագոյն մասն ամայացել էր: Չնայած պատմական հանգամանքների բերումով տարածքում տեղի ունեցած մեծ տեղաշարժերին՝ այնտեղ պահպանուել էին նաեւ բնիկ խօսուածքներ՝ Ագուլիսի բարբառը (Ագուլիս քաղաք, շրջակայ գիւղեր), Ջուղայի բարբառը (Հին Ջուղայի տարածքում գտնուող Ջուղա գիւղը), Աստապատի ենթաբարբառը (Աստապատ, Կարմիր վանք գիւղեր), Վայոց ձորի խօսուածքը (Նախճաւան գաւառի Ազնաբերդ եւ Ճահուկ-Շահապունիք գաւառի Օծոփ գիւղեր), Արցախի եւ Մեղրու բարբառների խօսուածքները (համապատասխանաբար Երնջակ եւ Գողթն գաւառների հիւսիսային գիւղեր): Բնակչութեան ներքին տեղաշարժերի հետեւանքով առաջացել էին նաեւ միջխօսուածքներ՝ Նախիջեւան-Այլապատի (Խոյի եւ Արարատեան բարբառներ), Ջուլֆայի (Ջուղայի եւ Խոյի), Որդուարի (Ագուլիսի եւ Խոյի) եւ այլն:

Նախիջեւանի բարբառային քարտէզը պատմական վճռորոշ իրադարձութիւնների հետեւանքով (օրինակ, 1604 թ., 1828 թ.) կրել է համապատասխան փոփոխութիւններ: 20-րդ դարում կարելի է առանձնացնել հետեւեալ հիմնական ժամանակագրական փուլերը՝

ա) 1918-1920 թուականների իրադարձութիւնների նախօրեակ, երբ հայ բնակչութիւնը կազմում էր տարածքի բնակչութեան մօտ 50 տոկոսը (մեծամասնութիւնը).

բ) 1924 թուականի՝ Նախիջեւանի ԻԽՍՀ կազմաւորման նախօրեակ, երբ հայ բնակչութիւնը կազմում էր տարածքի բնակչութեան մօտ 20 տոկոսը.

գ) 1988 թուականի՝ Նախիջեւանի վերջնական հայաթափման նախօրեակ, երբ հայ բնակչութիւնը կազմում էր տա-

© National Library of Armenia

րածքի բնակչութեան ընդամէնը 2 տոկոսը:

Անցեալ դարասկզբի Նախիջեւանի հայ բնակչութեան մասին առկայ վիճակագրական-տեղագրական տուեալների[1] եւ տարածքում առկայ խօսուածքների մասին մեր ունեցած տեղեկութիւնների հիման վրայ ստորեւ ներկայացնում ենք տարածքի՝ հայ բնակչութիւն ունեցող բնակավայրերը՝ ըստ գաւառների, եւ յիշեալ երեք ժամանակագրական փուլերում դրանցում առկայ խօսուածքները:

ԳՈՂԹՆ ԳԱՒԱՌ
(16 բնակավայր)

ՈՐԴՈՒԱՐ, Բիստ, Դեր, Դիսար, Հանդամէջ, Մեսրոպաւան, Ներքին Ագուլիս, Ներքին Ազա, Ողոռի, Ռամիս, Վերին Ագուլիս, Տանակերտ, Ցղնա, Փառակա, Քաղաքիկ, Վերին Ազա

ՆԱԽՃԱՒԱՆ ԳԱՒԱՌ
(20 բնակավայր)

ՆԱԽԻՋԵՒԱՆ, Ազնաբերդ, Ալագեոզ-Մազրա, Այլապատ, Աստապատ, Դիդուվար, Եմխանա, Երնջակ, Խալիլու, Կարախանբեկլու, Կարմիր վանք, Կուլիբեկ Դիզա, Հաջիվար, Մամարզա Դիզա, Մոխրաբլուր, Նազարապատ, Շմրթան, Տամբատ, Վերին Ըզնոբա, Քեարիմբեկ Դիզա

ԵՐՆՋԱԿ ԳԱՒԱՌ
(10 բնակավայր)

ՋՈՒԼՖԱ, Աբրակունիս, Արազին, Գեաղ, Կզնուտ, Նորաշէն, Շահկերտ, Շոռոթ, Ջուղա, Փորադաշտ

ՃԱՀՈՒԿ-ՇԱՀԱՊՈՒՆԻՔ ԳԱՒԱՌ
(10 բնակավայր)

ՃԱՀՈՒԿ, ՇԱՀԱՊՈՆՔ, Արինջ, Բաբոնք, Գեոմուր, Խալխալ, Կժաձոր, Նորս, Նորս-Մազրա, Օծոփ

ՇԱՐՈՒՐ ԳԱՒԱՌ
(7 բնակավայր)

ՆՈՐԱՇԷՆ, Ալաքլու, Դաշարխ, Թազագիւղ, Խանլուխլար, Վարմազեար, Քեշտազ

ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ
(8 բնակավայր)

ՈՐԴՈՒԱՐ, Դիսար, Հանդամէջ, Ներքին Ագուլիս, Վերին Ագուլիս, Տանակերտ, Ցղնա, Քաղաքիկ

ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ
(2 բնակավայր)

ՋՈՒԼՖԱ, Ջուղա

ԱՐՑԱԽԻ ԲԱՐԲԱՌ
(6 բնակավայր)

Աբրակունիս, Գեաղ, Նորաշէն, Շահկերտ, Շոռոթ, Փորադաշտ

ՄԵՂՐՈՒ ԲԱՐԲԱՌ
(5 բնակավայր)

Բիստ, Մեսրոպաւան, Ողոռի, Ռամիս, Փառակա

ԽՈՅԻ ԲԱՐԲԱՌ
(38 բնակավայր)

ՃԱՀՈՒԿ, ՇԱՀԱՊՈՆՔ, ՆԱԽԻՋԵՒԱՆ, ՆՈՐԱՇԷՆ, Ալագեոզ- Մազրա, Ալաքլու, Այլապատ, Արազին, Արինջ, Բաբոնք, Գեոմուր, Դաշարխ, Դեր, Դիդուվար, Եմխանա, Երնջակ, Թազագիւղ, Խալխալ, Խանլուխլար, Խալիլու, Կարախանբեկլու, Կզնուտ, Կժաձոր, Կուլիբեկ Դիզա, Հաջիվար, Մամարզա Դիզա, Մոխրաբլուր, Նազարապատ, Ներքին Ազա, Նորս, Նորս-Մազրա, Շմրթան, Վարմազեար, Վերին Ազա, Վերին Ըզնոբա, Տամբատ, Քեշտազ, Քեարիմբեկ Դիզա

ԱՍՏԱՊԱՏԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌ
(2 բնակավայր)

Աստապատ, Կարմիր վանք

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԽՕՍՈՒԱԾՔ
(2 բնակավայր)

Ազնաբերդ, Օծոփ

Դասական բարբառագիտութեանը քաջածանօթ են Ագուլիսի[2], Ջուղայի[3], Արցախի[4], Մեղրու[5] եւ Խոյի[6] ուսումնասիրուած բարբառները, ինչպէս նաեւ Աստապատի ենթաբարբառը[7]: Համեմատաբար «նորայայտ» բարբառ է Վայոց ձորի խօսուածքը (Վայոց ձորի շուրջ մէկ տասնեակ տեղաբնիկ գիւղեր, հիւսիսային Նախիջեւանի այժմ արդէն հայաթափ երկու բնակավայր՝ Նախիջեւան գաւառի Ազնաբերդ եւ Ճահուկ-Շահապունիք գաւառի Օծոփ գիւղեր): Մինչեւ 1980-ական թուականները Վայոց ձորի խօսուածքի մասին սոսկ թռուցիկ յիշատակութիւններ կային բարբառագիտական գրականութեան մէջ[8], որտեղ համարւում էր Արարատեան բարբառի խօսուածք: Մեր հեղինակած մի քանի աշխատանքներով[9] պարզել ենք, որ Վայոց ձորի խօսուածքը զուտ Արարատեան բարբառի խօսուածք չէ. այն իր յատկանիշներով հաւասարապէս տարբերւում է ինչպէս Արարատեան, այնպէս էլ Արցախի եւ Վասպուրականի յարակից խօսուածքներից. փաստ, որ հաստատում է խօսուածքի տեղաբնիկ լինելը:

Մասնաւորապէս՝ խօսուածքում բառասկզբում ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները խլանում են, իսկ բառամիջում եւ բառավերջում խուլերը ձայնեղանում են (պագ, տա՛նա՛գ, ծաքար, ճա՛նջ, կադու, արգաթ, պառց, կաբիդ, կանգաղ). մասնակիօրէն գործում է Աճառեանի օրէնքը (տա՛լա՛ր, պա՛նջա՛ր). բացառական հոլովը անուանական համակարգում կազմւում է էն վերջաւորութեամբ (սարէն, ծօրէն), դերանուանական համակարգում՝ անէ վերջաւորութեամբ (ինձանէ, քէզանէ). պահպանուել է հին հայերէնի օ հոլովումը (մըդանի-մըդանօ, քամի-քամօ). ապառնի դերբայը կազմւում է օ վերջաւորութեամբ (քընալօ, լըսիլօ). բայի ժխտական ձեւերը կազմւում են օժանդակ բայի ետադաս կիրառութեամբ (լսըմ չէմ, լսիլօ չէմ, լսըմ չիմ, բիդի լսիմ վօչ եւ այլն). բայի անցեալի ձեւերի առաջին դէմքում առկայ է մ վերջաւորութիւնը (լսըմ իմ, լսել իմ, լսիմ, կլսիմ, բիդի լսիմ, լսիլ դիմ):

Հետաքրքրական է նաեւ այն փաստը, որ Վայոց ձորի միջնադարեան վիմագիր արձանագրութիւններում[10] եւ ձեռագրերի յիշատակարաններում[11] պահպանուել են խօսուածքի հետքերը. փաստ, որը հաստատում է խօսուածքի բնիկ լինելը:

Ներկայացուող քարտէզները ժամանակագրական փուլերով ընդհանուր պատկերացում են տալիս ինչպէս տարածքի հայ բնակչութեան տեղաբաշխման, այնպէս էլ 20-րդ դարի ընթացքում բարբառների տարածման սահմանների մասին: Արձանագրում են նաեւ վերջին տասնամեակներում իրենց իսկ բնօրրանում հայերէնի մի շարք բարբառների ու խօսուածքների ոչնչացման իրողութիւնը, որոնց թւում են յատկապէս բազմաթիւ ուսումնասիրողների ուշադրութիւնը գրաւող Ագուլիսի բարբառը (զօկերէնը), որի վերջին կրողները մինչեւ 1988 թուականի վերջը ապրում էին Ցղնա գիւղում, Աստապատի ենթաբարբառը (մարել է 20-րդ դարի կէսերին), Ջուղայի բարբառը (պահպանուել է միայն Սպահանի Նոր Ջուղա թաղամասում), ինչպէս նաեւ Արցախի, Մեղրու, Խոյի բարբառների եւ Վայոց ձորի խօսուածքի տեղական տարբերակները:

© National Library of Armenia

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Ա.-Դօ (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան)**, *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.)*, Երեւան, 1907, էջ 64-67:

2 **Ս. Սարգսեան**, *Ագուլեցոց բարբառը (գօկերի լեզուն)*, մաս 1-2, Մոսկուա, 1883: **Հր. Աճառեան**, *Քննութիւն Ագուլիսի բարբառի*, Երեւան, 1935:

3 **Հր. Աճառեան**, *Քննութիւն Նոր Ջուղայի բարբառի*, Երեւան, 1940:

4 **Հր. Աճառեան**, *Քննութիւն Ղարաբաղի բարբառի*, Վաղարշապատ, 1901:

5 **Է. Աղայեան**, *Մեղրու բարբառը*, Երեւան, 1954:

6 **Մ. Ասատրեան**, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Երեւան, 1962:

7 **Հր. Աճառեան**, *Հայ բարբառագիտութիւն*, Մոսկուա, 1911, էջ 37, 45-46: **Գ. Ջահուկեան**, *Հայ բարբառագիտութեան ներածութիւն*, Երեւան, 1972, էջ 13-156:

8 **Ա. Ղարիբեան**, *Հայ բարբառագիտութիւն*, Երեւան, 1947, էջ 73: **Ա. Գրիգորեան**, *Հայ բարբառագիտութեան դասընթաց*, Երեւան, 1957, էջ 205:

9 **Ա. Վարդանեան**, *Վայոց ձորի խօսուածքի հնչիւնաբանութիւնը*, «Բանբեր Երեւանի համալսարանի», թիւ 1, 1983, էջ 71-83: **Ա. Վարդանեան**, *Վայոց ձորի խօսուածքի ձեւաբանական առանձնայատկութիւնները (դրոյթներ)*, «Երիտասարդ լեզուաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նիւթեր», Երեւան, 1986, էջ 107-108:

10 **Ղ. Ալիշան**, *Սիսական*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 145, 167:

11 *Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան*, հատոր Ա, Երեւան, 1973, էջ 39-40:



© National Library of Armenia





© National Library of Armenia